



ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳԴՊՐՈՑ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման- Նախագծերի մեթոդի կիրառման ազդեցությունը սովերոդների մոտ ստեղծարարության զարգացման և ուսուցման արդյունավետության բարձրացման վրա

Մասնակից՝ Աննա Հովհաննիսյան

Դպրոց՝ Արմավիրի N1 ավագ դպրոց

Վերապատրաստող՝ Աննա Արշակյան

Վաղարշապատ 2023թ.

1. Ներածություն	3
2. Գրականության ակնարկ	5
3. Գործնական համատեքստ	10
4. Հետազոտության ընթացք	11
5. Տվյալների մշակում և վերլուծություն	17
6. Եզրակացություն	18
7. Գրականության ցանկ	19

Ներածություն

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես:

©Ադուլֆ Դիստերվիզ

Համաձայն նոր ընդունված հանրակրթական պետական չափորոշիչների՝ 7-12-րդ դասարանում յուրաքանչյուր աշակերտ իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ իր ընտրած առարկայից կամ առարկաներից: Ուսուցիչների շրջանում կա անորոշություն, մտահոգություն: Շատերին է հետաքրքրում, թե ի՞նչ է նախագծային աշխատանքը, ինչպե՞ս են կազմակերպելու: Հետաքրքրվում են, թե որտեղ ի՞նչ կարելի է ձեռք բերել նախագծային աշխատանքների օրինակներ նմուշներ և օգտվելով դրանցից ինքնուրույն կազմակերպել նմանատիպ աշխատանքներ: Ուսուցիչներին այնքան էլ պարզ չէ, թե ո՞րն է նախագծային աշխատանքի նպատակը: Որտեղի՞ց գտնեն թեմաներ, կ՞ա արդյոք նախագծային աշխատանքների թեմաների ցանկ և բազմաթիվ նման հարցեր:

Հաշվի առնելով այս հանգամանքը մեր դպրոցում որոշվեց ԲՏ&Մ բնագավառի շրջանակում փորձարկել նախագծային ուսուցումը: Այդ նպատակով կազմակերպվեց «Գիտությունը և մենք» խորագրով աշխատարան: Նախագծային աշխատանքի փորձ ունեցող մեր գործընկերները որոշակի մեթոդական օգնություն ցուցաբերեցին կարիք ունեցող ուսուցիչներին: Մեր աշխատանքներին միացան նաև մարզի այլ դպրոցների ուսուցիչներ: Խորհրդատվություններ էր իրականացվում ոչ միայն առկա, այլ նաև հեռավար ձևաչափով:

Ուսումնական տարվա ընթացքում թիմերի ղեկավարները կատարել են քննարկումներ նախագծերի թեմաների, խնդիրների, նպատակների, վերջնարդյունքների շուրջ, մշակվել է նախագծի ներկայացման այցեքարտ, գնահատման և ներկայացման ձևաչափեր:

Ներկայիս ուսումնական գործընթացներում առանձնահատուկ կարևորություն ունեն նախագծային աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը ,որոնք իրենց բովանդակային ինքնատիպությամբ և աշխատատեղով տարբերվում են: Նախագծերի իրականացման արդյունքում աշակերտների մոտ զարգանում են մի շարք կարևորագույն հմտություններ, ինչպիսիք են թիմային աշխատանքը, պատասխանատվությունը, աշխատանքի պլանավորումն ու բաշխումը, ժամանակի կառավարումը, առաջնահերթությունների կարգավորումը և այլն: Նախագծային ուսուցման շնորհիվ աշակերտները, փորձելով սեփական ուժերը այս կամ այն ոլորտում, կողմնորոշվում են նաև ապագա մասնագիտության ընտրության հարցում, ուստի չափազանց կարևոր և անհրաժեշտ է այս մեթոդի կիրառումը ուսումնառության գործընթացում: Դրա համար նախ ինքը՝ ուսուցիչը պետք է լավ պատկերացնի աշխատանքի կազմակերպումն ու իրականացման քայլերը: Այդ նպատակով ուսումնասիրել եմ հսկայածավալ գիտամեթոդական գրականություն, սակայն ինչպես ասում են սովորում ենք կիրառելով

Իմ հետազոտության **նպատակն է**

1. Պարզել ֆիզիկայի դասերին նախագծային մեթոդի կիրառումը ինչպե՞ս է ազդում աշակերտների մոտ այնպիսի որակների զարգացման վրա, ինչպիսիք են ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու, դրանք մշակելու ունակությունը ,

ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հասկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու դրանք առանձնահատուկ կիրառելու ձգտումը:

2.Սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից:

3.Կարողանալ գտնել ուսուցման այնպիսի եղանակներ և կիրառել այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան զարգացնել երեխաների մտածողությունը, ստեղծագործական միտքը, մտքի ճկունությունը և արագությունը, նոր լուծումներ փնտրելու և գտնելու կարողությունը:

Ստեղծագործող մարդկանց կարիք զգացվում է հասարակության, սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում: Եվ ակնհայտ է, որ այդ պահանջը գնալով աճելու է: Հենց ստեղծագործող անձիք են ապահովում սոցիալական առաջընթացը, հասարակության զարգացումը և հենց դարձնում է այն կարևոր և առանցքային գործոններից մեկը, որը նպաստում է երեխաների ստեղծագործականության ձևավորմանը և զարգացմանը:

Ակնկալում եմ, որ այս մեթոդը կիրառելով մանրամասն հետադարձ կապի և իրավիճակի վերլուծության շնորհիվ մշակված գործողությունների հետագա քայլերը կնպաստեն սովորողների ուսումնառության որակի բարելավմանը և սովորողները կարժևորեն ֆիզիկա առարկան՝ որպես կյանքի գիտություն:

Հետագոտական աշխատանքի շրջանակներում իմ առջև **խնդիր** եմ դրել ուսումնասիրել նախագծային ուսումնառությունը նպաստում է արդյոք ուսման առաջադիմությանն ստեղծարարության զարգացման վրա **Վարկածի առաջ քաշումը**

Արդյո՞ք ուսումնական գործընթացում սովորողների ստեղծագործականության խթանման տարբեր միջոցներ կիրառելով հնարավոր է բարձրացնել ուսման որակը:

Այս նպատակի իրականացման համար վեր եմ հանել և առաջադրել հետևյալ կարևոր խնդիրներ.

- Ուսումնասիրել ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժական միջոցները;
- Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ստեղծագործականության խթանման գործում;

Առաջարկել կրեատիվության խթանման ալգորիթմ՝ փորձարկելով այն դասի ժառանգ:

Դարձնում ստեղծագործականության խթանման առաջնային նպատակն է աշակերտի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի

իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն:

Գրականության ակնարկ

«Բոլոր մարդիկ գործունեության այս կամ այն ոլորտում ունակ են գրանցելու ստեղծագործական նվաճումներ՝ ճիշտ պայմանների, ինչպես նաև համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության պարագայում»

Քեն Բոբինսոն

Հայ իրականության մեջ հայտնի մանկավարժ «Ստեղծարար մտածողություն» գրքի հեղինակ Վաչագան Սարգսյանը նշում է. «Մարդու մեջ զարգացնել ստեղծարար մտածողություն, նշանակում է նրան օժտել ստեղծագործելու որոշակի մեթոդիկայով, նրա մեջ ձևավորել ու զարգացնել երևույթները նորովի, անսովոր տեսանկյունից ներկայացնելու տեխնիկա, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, բազմազան հնարքներ բանեցնելու կարողություններ»:

Մի կողմից, կրեատիվությունը գործոն է, որը պատմության ընթացքում ենթարկվել է էվոյուցիայի, բազմաթիվ փոփոխություններ է կրել: Մյուս կողմից, դա անձի անհատական պոտենցիալն է, որը նրան հնարավորություն է տալիս ոչ միայն լուծել հանդիպող խնդիրները և հաղթահարել դժվարությունները, այլև ակտիվ կերպով ազդեցություն գործել շրջապատող իրականության որոշ ասպեկտների վրա, փոփոխել դրանք, փոխել սեփական կյանքը և ապագան: Այսպիսին է կրեատիվության ընդհանուր մեկնաբանությունը:

Ստեղծագործականության, այսինքն անձի ոչ ստանդարտ, տարբերվող մտածողության խնդիրը մշտապես մեծ հետաքրքրություն է առաջացրել և գտնվել է տարբեր ոլորտների մասնագետների ուշադրության կենտրոնում: Հատկապես այսօր, երբ առկա գիտատեխնիկական առաջընթացը զգալի ազդեցություն է թողնում մարդկանց կյանքի վրա, շատ կարևոր է ոչ շաբլոնային, ոչ ստանդարտ մտածողություն և գործելաոճ ունեցող անձանց ներկայությունը:

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ՝ սկսած ամենավաղ տարիքից:

Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ՝ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում

պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք վերածվեն լիարժեք կրեատիվության, դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել:

Այս խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կրեատիվության խնդիրը, և առհասարակ, կրեատիվության ֆենոմենը, տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է Է.Պ.Տորրենսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հայեցակարգի մեկնաբանում է կրեատիվությունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից, գործոններից [Туник Е. Е. Диагностика креативности. Тест П. Торренса: Методическое руководство. СПб., 1998, էջ 23]:

Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

- Մտքի սահունություն
- Մտքի ճկունություն
- Մտքի օրիգինալություն / յուրօրինակություն
- Մտքի մշակվածություն:

Վ. Շտերնը կարծում է, որ կրեատիվությունը – դա անձի հատկությունն է, որը նրան տրվում է ի ծնե [Штерн В. Умственная одарённость: Психологические методы испытания умственной одарённости в их применении к детям школьного возраста / В. Штерн ; пер. с нем. А. П. Болтунова ; под ред. В. А. Лукова. — СПб. : Союз, 1997, էջ 48]:

Ըստ Ա.Մատյուշկինի, կրեատիվությունը անձի՝ տաղանդով օժտված լինելու դրսևորումն է, որը կապված չէ առօրյա գործունեության հետ [Матюшкин, А. М. Загадки одарённости / А. М. Матюшкин. — М. : Школа-пресс, 1993, էջ 28]:

Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն՝ ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել անձի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Մակայն, ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում ստեղծագործական գործընթացը կապվում է տեսական մտածողության հետ:

Դպրոցում աշակերտների կրեատիվության խթանման գործում կարևոր նախապայման է մանկավարժի ներագդեցությունը նրանց մտածողության գործընթացի վրա:

Մտածողությունը սոցիալապես պայմանավորված, խոսքի հետ մշտապես փոխկապվածության մեջ գտնվող հոգեբանական գործընթաց է, որը հանգում է նորի բացահայտմանը, իրականության անմիջական կամ միջնորդավորված ընկալմանը և արտացոլմանը՝ դրա վերլուծության և համադրության ընթացքում [Психогимнастика в тренинге / Под ред. Н. Ю. Хрящевой. СПб., 2002, էջ 49]:

Այսպիսով, ստեղծագործականությունը–աշակերտի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

Ստեղծագործական գործունեությունը նպաստում է դպրոցականների մոտ բարձրագույն հոգեբանական և հոգեկան ֆունկցիաների զարգացմանը, ինչպիսիք են հիշողությունը, մտածողությունը, ընկալումը, ուշադրությունը, ինչն իր հերթին ազդում է աշակերտի կողմից՝ գիտելիքների, հմտությունների և կարողությունների յուրացմանը, որոնք նրանք ստանում են դասի ժամանակ:

Այս պարագայում շատ կարևոր խնդիր է աշակերտների մոտ հետաքրքրություն խթանել առաջադրված խնդրի, մատուցվող նյութի հանդեպ: Հետաքրքրության առկայությունը աշակերտի մոտ նպատակաուղղված կերպով տանում է նրան առաջադրված խնդիրների իրական իրագործմանը և լուծմանը՝ տարբեր եղանակներով: Ավելին, հետաքրքրությունը խնդրի հանդեպ զգալի կերպով ընդլայնում է աշակերտի աշխարհայացքը և կենսական փորձը, ծանոթացնում է նրան տարբեր տեսակի գործունեությունների հետ, ակտիվացնում և զարգացնում է նրա ընդունակությունները և հոգեբանական առանձնահատկությունները:

Ուսումնասիրելով գրականությունը, ծանոթանալով կրեատիվության բնույթի հետ, կարող ենք եզրակացնել, որ տվյալ գործընթացը անհրաժեշտ է և պետք է զարգացնել: Դպրոցում այս խնդրի իրացման համար պատասխանատվություն է կրում հենց մանկավարժը, ով պետք է աշակերտներին ուղղեկցի դեպի ստեղծագործական գործունեության ակունքները, խթանի նրանց մոտ հետաքրքրությունը ուսուցանվող նյութի հանդեպ, առաջարկի ոչ ստանդարտ լուծումներ առաջադրված խնդիրների համար:

Ուսումնական գործընթացը՝ դա այն գործընթացն է, որն ուղղեկցվում է աշակերտների ինքնուրույն գործունեությամբ, որի ընթացքում ճանաչողության, վարժությունների և ձեռք բերված փորձի հիման վրա նրանց մոտ ձևավորվում են նոր գիտելիքներ, հմտություններ, գործելու և վարքի նոր ձևեր, կատարելագործվում են նախկինում յուրացված ձևերը:

Ժամանակակից դպրոցում աշակերտը ուսումնական գործընթացում հանդես է գալիս, որպես ուսումնառության սուբյեկտ, համագործակցում է ուսուցչի և համադասարանցիների հետ: Սա հենց այն անձնային կողմնոնշված ուսումնառության ոճն է, որը հանդիսանում է կրեատիվության զարգացման բարենպաստ գործոն: Հենց այսպիսի միջավայրում մանկավարժը պետք է, առաջին հերթին, ձգտի բարենպաստ պայմաններ ստեղծել՝ աշակերտների ստեղծագործականության լիարժեք զարգացման համար, քանի որ ստեղծագործականությունը թույլ է տալիս աշակերտին հանդես գալ, որպես ուսման գործընթացի ակտիվ մասնակիցը, իրականացնել սեփական մտահաղացումները:

«Բոլերն էլ տաղանդավոր են , քանի դեռ օձին չեն առաջարկում հեծանիվ վարի...»

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՍՅՎԱԾՔ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: Ստեղծարարություն բառը ծագել է լատիներեն *creo* –ստեղծել, արարել, ծնել բառից: Ստեղծարարությունը հատկապես բնութագրիչ է արվեստի մարդկանց համար, սակայն պարզվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրեն բնորոշ տաղանդներ, որոնք յուրաքանչյուրի մոտ յուրովի են արտահայտվում: Եվ ի լրումն այս մտքի մեջ բերենք աշխարհահռչակ գիտնական Էյնշտեյնի այն միտքը, որ « Մենք բոլորս հանճարներ ենք, բայց եթե Դուք պետք է ձկան մասին դատեք նրա՝ ծառ բարձրանալու

կարողությամբ, ապա նա ողջ կյանքը կապրի՝ իրեն ամենավերջին անհաջողակը համարելով» : Հետևաբար ստեղծարարության կարողությունների բացահայտումն ու զարգացումը կհանգեցնի ցանկալի արդյունքների: Կրթությունը նպատակ ունի ձևավորել ստեղծարար մարդ: Եվ այսպես, ով է ստեղծարար մարդը... Այս կերպարը հանդես է գալիս անսովոր ոճով, նա նոր մտքերի և ծրագրերի ծնունդ տվող է: Հաղորդակցման առումով այս մարդիկ վարակում են իրենց բնույթով և իրենց եռանդով, նոր մտքեր են տալիս, ոգևորում են սկսելու նոր ծրագրեր:

Ստեղծագործական կարողությունների բացահայտմանը միտված մի շարք մեթոդներ, մեթոդիկաներ և տեխնիկաներ են ստեղծվել, որոնք նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծներ: Ստեղծագործական գործունեության մեթոդիկաները օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու գործընթացը, ինչպես նաև ավելացնում են դրանց քանակը, լայնացնում են խնդիրների վերաբերյալ արդեն եղած տեսակետները և ոչնչացնում իմացական արգելքները:

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և Կրթությունը նպատակ ունի ձևավորել ստեղծարար մարդ: Եվ այսպես, ով է ստեղծարար մարդը... Այս կերպարը հանդես է գալիս անսովոր ոճով, նա նոր մտքերի և ծրագրերի ծնունդ տվող է: Հաղորդակցման առումով այս մարդիկ վարակում են իրենց բնույթով և իրենց եռանդով, նոր մտքեր են տալիս, ոգևորում են սկսելու նոր ծրագրեր:

Ստեղծագործական կարողությունների բացահայտմանը միտված մի շարք մեթոդներ, մեթոդիկաներ և տեխնիկաներ են ստեղծվել, որոնք նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծներ: Ստեղծագործական գործունեության մեթոդիկաները օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու

գործընթացը, ինչպես նաև ավելացնում են դրանց քանակը, լայնացնում են խնդիրների վերաբերյալ արդեն եղած տեսակետները և ոչնչացնում իմացական արգելքները:

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով:

Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների կրեատիվության, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Գիտելիքների գումարի յուրացումն ու մտապահումը, որոնք ավանդաբար համարվել են ուսուցման հիմնական նպատակ, այսօր վերածվել են ուսուցման հիմնական նպատակին հասնելու միջոցների:

Գործնական համատեքստ

Այս հետազոտական աշխատանքի ընթացքում վեր են հանել հետևյալ կարևոր խնդիրները և հարցերը, որոնք, ըստ իս, փոխադարձաբար կապակցված են աշակերտների »ստեղծագործականության, կրեատիվության զարգացման հետ: Այդ խնդիրներն են.

- Երեխայի ստեղծագործական երևակայության զարգացում
- Բանավոր խոսքի զարգացում
- Ինքնարտահայտվելու կարողության զարգացում
- Ազատ և անկաշականդ շփում հասակակիցների և մեծերի հետ
- Նախաձեռնելու, համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերում
- Աշխատասիրության, պատասխանատվության, ուշադրության դրսևորում;
- Գեղագիտական ճաշակի զարգացում
- Տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու կարողություն
- Իրավիճակը շտկելու կարողություն
- Բարդույթներից ազատագրում: Ուսումնական գործընթացում աշակերտների ստեղծագործականությունը խթանելու հիմնական բաղադրիչ գործողություններն են.
- Խմբային աշխատանք
- Համագործակցություն
- Խնդիրների պլանավորում և բաշխում
- Համապատասխան նյութերի և դիդակտիկ միջոցների կիրառություն
- Ստեղծագործելու ազատություն

- Խրախուսում և գնահատում
- Մխայի, իրավունքի պահպանում
- Հարգանք ընկերոջ կարծիքի նկատմամբ:

Հետազոտության նպատակով ընտրել եմ 10 բնմ դասարանի բնագիտական ենթահոսքի սովորողներին: Խմբում սովորում են 7 աշակերտներ՝ 2 տղա և 5 աղջիկ: Այս հետազոտական աշխատանքի շրջանակներում, հիմնվելով վերը թվարկված սկզբունքների վրա, փորձարկում է իրականացվել որն ուղղված է եղել համապատասխան մեթոդական հնարքների և մանկավարժական նպատակաուղղված գործունեության շնորհիվ խթանել աշակերտների ստեղծագործականությունը, ուսումնական աշխատանքի ընթացքում կրեատիվության դրսևորման ունակությունը:

Հետազոտությունը կատարվել է *բնական* պայմաններում, ուսումնասիրելով աշակերտների մեկ խումբ, որը հանդիսացել է այս հետազոտության *օբյեկտը*:

Հիմնվելով հետազոտության նպատակի և խնդիրների վրա՝ առաջ քաշվեց հետևյալ տեսակետը: Աշակերտների մոտ ստեղծագործականությունը կակտիվանա ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպման դեպքում, երբ դասարանում ստեղծվի «հաջողության» և համագործակցության մթնոլորտ, գործադրվեն հետաքրքրաշարժ միջոցներ և դիդակտիկ նյութեր՝ նյութի մատուցման և ուսուցանման համար:

Հետազոտական դասերի շրջանակներում՝ իրականացրել եմ *ներգրավված դիտարկում*՝ հանդիսանալով դասապրոցեսի անմիջական մասնակիցը և ուղղորդող անձը:

Տվյալների հավաքագրման համար կիրառել եմ համապատասխան հարցաթերթիկներ՝ աշակերտների համար:

Աշակերտների ստեղծագործականության ցուցանիշները ամփոփելու և գնահատելու համար՝ աշակերտներին առաջարկվել է լրացնել հայտորոշիչ թեստ, և առաջադրանքից ելնելով գնահատել եմ աշակերտների ստեղծագործականությունը: Օգտվել եմ նաև հոգեբանի աջակցությունից:

Հետազոտության ընթացքը

Նախապատրաստական փուլ

Այս խմբում ֆիզիկան դասավանդվում է շաբաթական 1 դասաժամով այդ պատճառով ժամանակը ռացիոնալ օգտագործելու նպատակով ստեղծեցի խումբ, որտեղ քննարկվում էր աշխատանքների հետ կապված հարցերը Իմ կողմից ապահովվում էր հետադարձ կապ

Հաշվի առնելով բջջային հեռախոսների դերը ժամանակակից մարդու կանքում՝ 10-րդ դասարանի աշակերտների հետ իրականացրեցինք հետզոտական նախագիծ «Բջջային հեռախոսների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա» թեմայով: Նախագծի իրականացման համար առաջին դասին նախ աշակերտները ծանոթացան վերնագրին, այնուհետև նրանց հետ միասին կազմեցինք 3 խումբ, , հստակ որոշվեց ամեն մի խմբի աշխատանքի ոլորտը:

Առաջին խումբ՝

1. Տեսական մաս, բջջային կապի աշխատանքի սկզբունքը, զարգացման փուլերը
2. Բջջային կապի օգտակար կողմերը
3. Բջջային հեռախոսի միկրոալիքային ճառագայթների հատկությունները
4. Ներկայացնել ոլորտում կիրառվող նորարարությունները՝ ազդեցությունից խուսափելու համար (տեսանյութի ցուցադրում)

Երկրորդ խումբ

1. Բջջայինը ներխուժել է երեխաների կյանք, ինչպիսի հետևանքներ կարող է այն թողնել զարգացող օրգանիզմի վրա
2. Գիտափորձերի ցուցադրում(տեսանյութ)
3. Խորհուրդներ բջջային հեռախոսներից անվտանգ օգտվելու համար (տեսանյութի ցուցադրում)

Երրորդ խումբ

1. Արդյո՞ք անվտանգ են բջջային կապ ապահովող ալեհավաքները
2. Նկարահանումներ քաղաքում
3. Տեսանյութի ներկայացում, մեկնաբանում (ստեղծվեց ֆոտոշարք, հանդիպում կազմակերպվեց բջջային կապի մատակարարման ոլորտի աշխատակիցների հետ)

Չորրորդ խումբ

1. Նախապես պատարաստել հարցաթերթիկը
2. Հարցումներ ծնողների, ուսուցիչների, բժիշկների, հասակակիցների շրջանում
3. Արդյունքների վերլուծություն և ներկայացում աղյուսակի դիագրամների տեսքով

Կատարվեց խմբերում աշխատանքի բաժանում, ճշգրտեցինք ու համաձայնեցինք աշխատանքի կատարման ժամկետները: Սկսվեցին աշխատանքերը, աշակերտները աշխատում էին թե՛ տանը, թե՛ դպրոցում: Յուրաքանչյուրն իր ճանապարհին ուշադրություն էր դարձնում թե մեր քաղաքի որ հատվածներում կան տեղադրված այլեհավաքներ, ինչից հետո գնում էին նկարահանումների, էլեկտրոնային գրադարանում խմբի անդամներով ընտրում էին համացանցից ո՞ր տեսանյութն է ավելի հարմար և համապատասխանում իրենց հետազոտություններին: Հետագայում անհարժեշտություն առաջացավ կենսաբանության ուսուցչի խորհրդատվության: Պարզվեց, որ մեր աշակերտները բավականին հմուտ կարողանում են կիրառել համակարգիչը և համացանցն իրենց աշխատանքում, իսկ պատրաստվելիս նրանց ուղղորդեց ինֆորմատիկայի ուսուցիչը: Արդյունքների ներկայացումը կատարվեց «Գիտությունը և մենք» խորագրով աշխատարանի ամփոփիչ միջոցառման շրջանակներում: Գնահատվեցին թե՛ խմբերը, և թե՛ առանձին աշակերտները, կատարվեցին նաև ինքնագնահատումներ: Աչքի ընկած աշակերտները պարգևատրվեցին պատվոգրերով: Վստահ կարելի է ասել, որ գնահատման նման կարգը շահագրգռում է աշակերտներին հետագա նախագծերին մասնակցելու համար:

Ստորև ներկայացնում եմ նախագծի ներկայացման ձևաչափը

Նախագծի ներկայացման ձևաչափ

Նախագիծը ներկայացնող Արմավիրի Ռ.Եղոյանի անվ.Ո1 ավագ դպրոց
Նախագծի թեման-«Բջջային կապ,բջջային հեռախոսի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա»>>

Առարկան- ֆիզիկա

Նախագիծն իրականացնող դասարանը -10բմ

Նախագծի ղեկավարը-Աննա Հովհաննիսյան

1.	Թեման	-«Բջջային կապ,բջջային հեռախոսի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա»>>
2.	Խնդիրը	Աշխարհի միլիոնավոր մարդիկ օգտվում են բջջային

		<p>հեռախոսից: Դրանք շատ կարևոր դեր ունեն ժամանակակից մարդու կյանքում: Բջջային կապը հիմնովին փոխել է մեր կյանքը: Բայց ,չգիտես ինչու, ավելի ու ավելի են շատանում խոսակցությունները բջջային հեռախոսի վնասակար ազդեցության մասին: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ սովորողների մեծամասնության մոտ առկա է կախվածությունբջջային հեռախոսից: Հարց է առաջանում . արդյո՞ք բջջային հեռախոսը ազդում է մարդու առողջության վրա, եթե այո, ինչպե՞ս պաշտպանվել բջջային հեռախոսի բացասական ազդեցությունից: Տեղեկացվա՞ծ են արդյոք սովորողները բջջայինից անվտանգ օգտվելու կանոններին:Որքանո՞վ են պատկերացնում բջջայինի վտանգները : Ծանո՞թ են արդյոք բջջայինից օգտվելու էթիկետին:</p>
3.	Նպատակը	<p>Սովորողների մոտ ձևավորել բջջային հեռախոսից ճիշտ օգտվելու մշակույթ:</p> <p>Ջարգացնել տեխնոլոգիական նորամուծությունների գիտական հիմքերը բացատրելու, տեխնոլոգիական ձեռքբերումները որպես գիտական եւ հետազոտական մտքի արգասիք ներկայացնելու , դրանց հետ կապված հնարավոր վտանգները բնության եւ մարդու կյանքում գիտակցելու կարողություններ :</p> <p>Ձևավորել գիտատեխնիկական զարգացմանն առնչվող էթիկական հարցեր քննարկելու, դրանց վերաբերյալ փաստարկված դիրքորոշում հայտնելու ունակություն :</p>
4.	Նախագծի տեսակը	<p>Տեղեկատվական / տեսական/ է, քանի որ նախ տեղեկության է հավաքագրվել բջջային կապի ստեղծման պատմության, հեռախոսների աշխատանքի սկզբունքի վերաբերյալ :</p> <p>Հետազոտական-քանի որ ընտրված թեմայի հիմնավորման համար առաջադրվել է վարկած - բջջայինը ազդում է առողջության վրա :</p> <p>Հետազոտվող թեման ակտուալ է, քանի որ կատարվել է սոց հարցում և պարզվել որ աշակերտների մեծամասնությունը օգտվում է բջջային կապից և գրեթե տեղյակ չեն բջջայինից ճիշտ օգտվելու կանոններին:</p> <p>Ստեղծագործական է ,քանի որ ձևավորել և ստեղծել են բուկլետ,բջջայինը անվտանգ օգտագործելու կանոններ ինչպես նաև բջջայինից ճիշտ օգտվելու էթիկետի</p>

		<p>նորմեր:</p> <p>Գործնական –քանի որ իրենց ստեղծած բուկլետը տարածել և մասսայականացրել են դպրոցի շրջանակներում դասղեկի ժամերին:</p> <p>1 Ըստ առարկայական բովանդակության շրջանակների. Միջառարկայական Ֆիզիկա, կենսաբանություն, ինֆորմատիկա: Ֆիզիկա: Էլեկտրամագնիսական ալիքների կիրառական նշանակությունը ինֆորմացիայի հաղորդման գործում Կենսաբանություն: Էլեկտրամագնիսական դաշտի ազդեցությունը կենդանի օրգանիզմի վրա Ինֆորմատիկա : Ms office կիրառում</p> <p>2 .Ըստ հաղորդակցման բնույթի Ներքին</p> <p>3. Ըստ նախագծի մասնակիցների թվի Խմբային:</p> <p>4. Ըստ նախագծի տևողության <i>, երկարաժամկետ:</i></p>
4.	<p>Առարկայական վերջնարդյունքներ /գիտելիք, հմտություն, արժեք, վերաբերմունք/</p>	<p>Ներկարագրել, թե ինչ է էլեկտրամագնիսական ալիքը: Ընդհանուր գծերով բացատրել բջջային հեռախոսի և ինտերնետային կապի իրականացման սկզբունքը: Լուսաբանել էլեկտրամագնիսական ալիքների կիրառական նշանակությունը ինֆորմացիայի հաղորդման գործում:</p> <p>Ճանաչողական, իմացական տիրույթում Առարկայական գիտելիքների խորացում Խնդիրներ լուծելու հմտություն Վարկածներ առաջադրելու հմտություն Տարբերակող հմտություն Ստեղծագործական մտածողություն</p> <p>Ներանձնային տիրույթում Ինքնակառավարում Ինքնազարգացում Ճկունություն</p> <p>Միջանձնային տիրույթում Հաղորդակցություն Համագործակցություն</p>
5.	<p>Խնդրի լուծման նկատմամբ մոտեցումներ</p>	<p>1.Գտնել տեղեկատվություն բջջային կապի դր զարգացման պատմության մասին , ուսումնասիր գրականությունը :</p> <p>2.Հասարակական կարծիքի հետազոտում <<Բջջայի</p>


		<p>հեռախոսի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա թեմայով:</p> <p>3.Մշակել և ձևակերպել հեռախոսից անվտանգ օգտվելու կանոնները.</p> <p>4. Ստեղծել Էթիկետի նորմեր:</p> <p>Հետազոտման մեթոդները</p> <p>1.Թեմային վերաբերվող գրականության որոնում ասումնասիրում և վերլուծում:</p> <p>2.Թեստավորում</p> <p>3.Թեստավորման արդյունքների վերլուծություն</p> <p>4.Հարցում</p> <p>5.Դիտարկում</p> <p>Գործնական ուղղվածություն</p> <p>Այս նյութերից կարելի է օգտվել դասղեկի ժամերի դպրոցի բոլոր դասարաններում</p>
7.	Միջավայրի ստեղծում	<p>Սովորողները աշխատում են տանը, իսկ քննարկումները կատարվում են սոցիալականներում ինձ հետ, ստանալով հետադարձ կապ, հարցաթերտիկների արդյունքների վերլուծությունը կատարում են ինֆորմատիկայի կաբինետում :</p> <ul style="list-style-type: none"> • Նու բովանդակության կազմակերպման փորձագետ ֆասիլիտատոր՝ Աննա Հովհաննիսյան • Մենթորներ՝ Մհերյան Գայանե, Վարդանյան Շուշանիկ <p>Մոտիվացնողներ, խորհրդատուներ</p> <p>Տնօրինություն, մանկամասեր, աշակերտներ:</p> <p>Նու ընթացքի և արդյունքի գնահատողներ են լինելու</p> <ul style="list-style-type: none"> • Փորձագետ ֆասիլիտատոր • Խորհրդատուներ • Անկախ փորձագետներ • Նախագիծ իրականացնող խմբերի ղեկավարներ • Ինքնագնահատում
8.	Ժամանակացույցը	<p>Սկիզբը նույն է</p> <ul style="list-style-type: none"> • Միջանկյալ քննարկումները Դեկտեմբեր. հունվար • Գործնական քայլերը փետրվար մարտ • Ներկայացումը ապրիլ

10.	Արդյունքը	Մշակել բջջային հեռախոսի անվտանգ օգտագործման կանոններ Ստեղծել էթիկետի նորմեր Պատրաստել բուկլետ Դասղեկներին առաջարկել ստեղծած նյութերը (բուկլետ, սահիկաշար)օգտագործել դասղեկի ժամին,անհրաժեշտության դեպքում հրավիրել նյութերը ստեղծած աշակերտներին:
11.	Ներկայացման ձևը	Գիտական զեկույց,սահիկաշար:
12.	Գնահատումը	Նախագծի ընթացքում կիրառում եմ <i>ձևավորող գնահատում</i> և <i>հետադարձ կապ</i> , կատարվում է <i>թիմային</i> և <i>անհատական աշխատանքի ինքնագնահատում</i> , <i>իսկ վերջում՝ ամփոփիչ գնահատում ըստ ԿԶՆԱԿԻ առաջարկած ռուբրիկի:</i> Կատարվելու է գնահատում նաև Մենթորների կողմից Անկախ փորձագետների կողմից Նու իրականացնող խմբերի ղեկավարների կողմից:

Հետազոտության վերլուծություն

Հետազոտական առաջին դասին գրեթե բոլորը անորոշության մեջ էին Նրանք առաջին անգամ պետք է կատարեին նման աշխատանք:Դասի ընթացքում 7 աշակերտներից 3-ը ցուցաբերում էին բարձր ակտիվություն, մասնակցություն դասին, ձգտում էին արտահայտել իրենց կարծիքը ուսուցչի կողմից առաջադրված հարցերի և քննարկումների շրջանակներում, արտահայտում էին բավականին բարձր հետազոտողականություն դասի ընթացքում: Աշակերտներից 2-ը նույնպես բավականին հետաքրքրված էին, սակայն չափազանց պասիվ, չէին մասնակցում դասին առանց իմ /ուսուցչի/ հորդորի և ուղղակի հարցադրումների: Սակայն, երբ ես հարցերով դիմում էի նրանց, նրանք բավականին արագ արձագանքում էին և փորձում արտահայտել իրենց մտքերը: 2 աշակերտ չափազանց պասիվ էին Նրանց մոտ դրսևորվեց անտարբերություն

ներկայացված պատկերը արտահայտենք դիագրամի միջոցով



Հաջորդ դասերին յուրաքանչյուր դասի առաջին 10 բույսերն տրամադրվում էր շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքների վերլուծությանը, քննարկմանը: Հետագոտական երկրորդ դասին Համապատասխան մեթոդների ու հնարների կիրառման արդյունքում հարցաթերթիկների և ինքնագնահատման թերթիկների միջոցով պարզ դարձավ, որ 7 աշակերտներից ակտիվ և ոգևորված դասին մասնակցեցին 6 ը,1 աշակերտի մոտ դիտարկվեց մասնակի պասիվություն: Ամփոփելով վերը ասվածը կարող եմ փաստել որ գրանցվել է աշխատանքի նկատմամբ հետաքրքրության և մոտիվացիայի աճ: Երեխաները ոչ միայն գտնում ուսումնասիրում էին իրենց հանձնարարված թեմայի վերաբերյալ նյութեր այլ նաև իրենց անհատական մոտեցմամբ առաջարկում էին յուրօրինակ լուծումներ Աշակերտների ստեղծագործական ունակությունները բացահայտվեցին հատկապես այն դասին երբ ստեղծում էին բջջայինից օգտվելու էթիկետի կանոնները, մյուս խումբը ստեղծում էր բջջայինը անվտանգ օգտագործելու, կանոնները իսկ երրորդ խումբը ձևավորում էր բույլետը Սովորողներից 2ը հանձն առան սահիկաշարի ստեղծումը :

Եզրակացություն

Այսպիսով՝ ի՞նչ կտա սովորողներին ստեղծարար մտածողությունը Ելնելով տեսական վերլուծությունից և փորձարարական արդյունքների ամփոփումից, կատարել եմ հետևյալ եզրակացությունները Իարկե դժվարին, բայց կատարված փորձարարական աշխատանքը ցույց տվեց, որ լուծելի խնդիր է դարձրած հասակ երեխաների մոտ ստեղծարարության զարգացումը այն միտումով , որ նա ունենա ուրույն մտածողություն, վառ երևակայություն, ինքնագարգացման ու առաջընթացի մեծ ձգտում, ինքնագնահատականի և ինքնավստահության բարձրացում, ինչու չէ նաև ազատ շփվելու և լավ հարաբերություններ հաստատելու կարողություն:

Ժամանակակից մեթոդները տալիս են մեզ այդ հնարավորությունները: Հատկապես նախագծային ուսումնառությունը Ֆիզիկայի դասերին նպաստում է երեխաների ստեղծարարության զարգացմանը, ինտելեկտի հարստացմանը, կրեատիվ

մտածողության, հետաքրքրասիրության քննադատական մտածողության զարգացմանը:

Ստեղծագործական ներուժ ունեցող երեխաները տարբերվում են իրենց ինքնատիպ պատասխաններով, մտածելակերպով, ինչպես նաև իրենց տարիքի համար միջինից բարձր ինտելեկտով: Ըստ իս ընտրված գործիքների կիրառումը ճիշտ էր , նպատակաուղղված, սակայն գրանցած հաջողությունները բավարարող չէին , ուստի ընտրված և այլ նոր մեթոդներով աշխատանքները կշարունակվեն ցանկալի արդյունք գրանցելու համար:

Մովորողներին՝ որպես ապագա մասնագետների, ստեղծարարության զարգացումն այլ որակների հետ համադրությամբ ուսուցման գործընթացում հնարավորություն կընձեռնի լավագույնս հաղթահարել ժամանակակից աշխարհի մարտահրավերները: Այսպիսով, ստեղծագործական մտածելակերպն անհրաժեշտ է և՛ կրթության ոլորտում, և ձեռնարկատիրական գործունեության մեջ, և՛ անձնական հարաբերություններում, ստեղծագործական կյանքում, աշխատանքային գործունեության ցանկացած ոլորտում:

Օգտագործված գրականություն

1. Белоусова А.К., Вышквыркина М.А. Социальный интеллект // Психология общения. М.: 2015
2. Лейтес Н. С. Способности и одаренность в детские годы. М., 1984
3. Матюшкин, А. М. Загадки одарённости / А. М. Матюшкин. — М. : Школа-пресс, 1993
4. Психогимнастика в тренинге / Под ред. Н. Ю. Хрящевой. СПб., 2002
5. Туник Е. Е. Диагностика креативности. Тест П. Торренса: Методическое руководство. СПб., 1998
6. Штерн В. Умственная одарённость: Психологические методы испытания умственной одарённости в их применении к детям школьного возраста / В. Штерн ; пер. с нем. А. П. Болтунова ; под ред. В. А. Лукова. — СПб. : Союз, 1997

